



Կարգապահական գործ թիվ ԿԳ-20003

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հունիսի 23-ի թիվ 73-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/61-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԱՖԱՅԵԼ ՍԵՓԻԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Ռաֆայել Սեփիանյանին (արտոնագիր թիվ 1969) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հասմիկ Շիրինյանը, (**այսուհետ, նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ 18.04.2019թ. պայմանագիր (**այսուհետ, նաև՝ Պայմանագիր 1**) է կնքել փաստաբան Ռաֆայել Սեփիանյանի հետ և վճարել 150.000 ՀՀ դրամ, որպեսզի իր շահերը ներկայացնի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում (**այսուհետ՝ Բանկ**) և առաջին ատյանի դատարանում, քանի որ ինքը ժամանակին չի կատարել իր վարկային պարտավորությունները, ինչի արդյունքում ավելացել է նաև տույժ և տուգանք:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Ռաֆայել Սեփիանյանն իրեն հավաստիացրել է, որ Բանկի գլխամասում ընկեր ունի և, այդ հարցն ուղղակի ժամանակի խնդիր է: Երկու ամիս անց փաստաբանը Բանկ ներկայացնելու համար իրեն դիմումներ է առաջարկել ստորագրել, սակայն դրանից երկու ամիս հետո՝ 18.09.2019թ. ստացվել է Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժի նամակը, որը փաստաբանը բնութագրել է, իբրև անիմաստ և անօրինական մասնավոր կազմակերպության պատասխան, որին լուրջ

վերաբերվել պետք չէ, մինչդեռ 26.09.2019թ. դատարանը բավարարել է Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժի վճիռը:

Հասմիկ Շիրինյանը դիմումով նաև հայտնել է, որ փաստաբանն ասել է, որ պետք է կնքել նոր պայմանագիր և վճարել 200.000 ՀՀ դրամ, որպիսի ինքը կարողանա դիմել վերաքննիչ քաղաքացիական դատարան, բայց այդ գումարը 14 օր անց կվերադարձնի Դիմողին: Արդյունքում 26.11.2019թ. Դիմողը պայմանագիր է կնքել (**այսուհետ, նաև՝ Պայմանագիր 2**) փաստաբանի հետ և վճարել է 200.000 ՀՀ դրամը: Այնուհետև Դիմողին հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից տեղեկացրել են, որ իր ամբողջ գույքը և աշխատավարձի հաշվեհամարը կալանքի տակ է, իսկ Ռաֆայել Սեփիսանյանը հայտնել է, որ խոսել է Բանկի իրավաբանի հետ, իսկ վերջինս ասել է, որ, եթե վճարվի 1.500 ԱՄՆ դոլար կամ 1.000 ԱՄՆ դոլար կամ 270.000 ՀՀ դրամ, ապա ժամանակ կտան մայր գումարը վճարելու համար, իսկ տույժ տուգանքների 40 տոկոսը կզիջեն: Այդ կապակցությամբ Դիմողը փաստաբանին առաջարկել է իրեն վերադարձման ենթակա Երկրորդ պայմանագրի գումարից 150.000 ՀՀ դրամը առաջարկել Բանկին, որին փաստաբանը համաձայնել է:

Ըստ Դիմողի, այցելելով հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում իր գործով զբաղվող աշխատակցին, հասկացել է, որ Բանկում իր շահերը ոչ ոք չի ներկայացրել, ուստի փաստաբանից պահանջել և ստացել է իր գործին առնչվող բոլոր փաստաթղթերը և Երկրորդ պայմանագրով վճարված ամբողջ գումարը, սակայն Առաջին պայմանագրով վճարված գումարը փաստաբանը չի վերադարձրել:

Դիմողն ըստ էության նաև նշել է, որ այնուհետև պարզել է, որ Բանկում իր պարտքի գումարն ավելացել է, մինչդեռ փաստաբանն իրեն հավաստիացրել է, որ այն չի ավելանա:

Վերոգրյալի կապակցությամբ Դիմողը խնդրել է փաստաբանին պարտավորեցնել փոխհատուցել իր վնասները, ինչպես նաև վերադարձնել իր կողմից վճարված 150.000 ՀՀ դրամ գումարը:

Դիմումին կից ներկայացրել է նույնականացման քարտի, Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժային դատարանի 06.09.2019թ. թիվ 13-055-06-19 գործով կայացված վճիռ, 26.11.2019թ. և 18.04.2019թ. իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 06.05.2019թ. և 26.06.2019թ. գրությունների, Հասմիկ Շիրինյանի 09.07.2019թ. և 31.07.2019թ. գրությունների, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 01.04.2019թ. տրված տեղեկանքի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.09.2019թ. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 10.02.2020թ. թիվ 26-Ա/ԿԳ-20003 որոշմամբ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի (արտոնագիր թիվ 1969) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների

պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8, 3.8.4 ենթակետերի և «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի** պահանջների խախտման հատկանիշներով:

14.02.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը ներկայացել է կարգապահական նիստին լիազոր ներկայացուցչի հետ: Նիստի ընթացքում թե՛ Դիմողը, և թե՛ վերջինիս ներկայացուցիչը պնդել են դիմումով ներկայացված իրենց դիրքորոշումը նշելով, որ դիմել են Պատասխանողին, որպեսզի վերջինս ներկայացնի իրենց շահերը Բանկում և առաջին ատյանի դատարանում: Վերջինս հավաստիացրել է, որ զբաղվում է իրենց գործով և ունի Բանկում ծանոթ, ով հավաստիացրել է, որ կարիք չկա Բանկին վճարում կատարելու, ինչպես նաև որ իրենց գործով տույժերն ու տուգանքները դադարեցված են: Փաստաբանը հուսադրել է Դիմողին և միայն վերջում, երբ Դիմողը ԴԱՀԿ ծառայության միջոցով պարզել է, որ իրենց գործով Պատասխանողը չի զբաղվել և հետևաբար իրենց տույժերն ու տուգանքները ավելացել են, միայն այդ ժամանակ է փաստաբանն ասել, որ վերջինս նախկինում դիմումներ է ուղարկել Բանկին և ստացել մերժում: Կարգապահական նիստի ժամանակ ևս Դիմողը պնդել է, որ փաստաբանը չի ներկայացրել վերջինիս շահերը Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժում, առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարաններում:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պատասխանողը Նախապատրաստողի կողմից գործը նախապատրաստելուց հետո՝ 30.04.2020 թվականին ներկայացրել է առարկություն, որով հայտնել է հետևյալը.

Ըստ փաստաբանի իր և Դիմողի միջև 18.04.2019թ. կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով ինքը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը առաջին ատյանի դատարանում:

Փաստաբանը մեջբերելով Պայմանագիր 1-ի 1.2, 2.2.2, 8.1 կետերի դրույթները, հայտնել է, որ Դիմողը նախազգուշացված է եղել, որ ինքը որևէ երաշխիք չի տալիս գործի ելքի հետ կապված:

Պատասխանողը նաև հայտնել է, որ մի քանի անգամ առաջարկել է Դիմողին անձամբ Բանկ ներկայանալ խնդրի լուծման համար, սակայն տեսնելով, որ վերջինս չի պատրաստվում անձամբ Բանկ այցելել, կազմել է «Վարկային պարտավորությամբ առաջացած տույժ տուգանքները մասնակի կամ

ամբողջությամբ զիջելու վերաբերյալ» դիմումներ: Պատասխանողը հայտնել է, որ իր կողմից կազմված դիմումներով խնդրել է Բանկին թույլատրել վճարել մայր գումարը և հնարավորության դեպքում զիջել տույժ տուգանքները: Պատասխանողը նաև նշել է, որ հուլիսի 31-ին դիմում է ուղարկվել Բանկին՝ ստորագրված Դիմողի կողմից, որով նշվել է, որ Բանկը ընթացք չի տալիս վերջինիս գործին և գրավոր պատասխան չի ուղարկում ի պատասխան ուղարկված դիմումներին: Այդպիսով ըստ փաստաբանի, Դիմողը, ստորագրելով վերոնշյալ դիմումը, հաստատել է նաև այն փաստը, որ ոչ թե Պատասխանողի կողմից է ծառայությունը թերի մատուցվել, այլ Բանկը չի պատասխանել վերջինիս դիմումներին:

Անդրադառնալով Բանկի կողմից արբիտրաժային դատարան դիմելուն, փաստաբանը նշել է, որ Բանկի և Դիմողի միջև կնքված եղել է արբիտրաժային համաձայնություն և հենց այդ համաձայնության հիման վրա է Բանկը հայցադիմում ներկայացրել արբիտրաժային դատարանին, ուստի այս մասով իր մեղքը նույնպես բացակայում է:

Ըստ փաստաբանի, ինքը չի ներկայացել արբիտրաժային տրիբունալի նիստին, քանի որ Դիմողն է իրազեկվել նիստի մասին և իրեն տեղյակ չի պահել: Դիմողը փաստաբանին ցույց է տվել 06.09.2019թ. արբիտրաժային տրիբունալի վճիռը և տեղեկացրել, որ Բանկի հետ համաձայնության են եկել և Բանկը պատրաստ է տույժ, տուգանքները ներել՝ Դիմողի կողմից մայր գումարն ամբողջությամբ վճարելու դեպքում: Երբ փաստաբանը տեղեկացել է, որ Դիմողը հնարավորություն չունի միանգամից գումարը վճարել, առաջարկել է կնքել Պայմանագիր 2-ը, իր շահերը վերաքննիչ ատյանի դատարանում ներկայացնելու համար:

Ամփոփելով շարադրանքը՝ փաստաբանը նշել է, որ իր կողմից իրավական օգնություն տրամադրելու ծառայությունները մատուցվել են բարեխիղճ և ժամանակին, իսկ տոկոսների ավելացումը պայմանավորված է ոչ թե իր անգործությամբ, այլ Դիմողի կողմից Բանկի հանդեպ ստանձնած պարտավորությունը չկատարելով:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

14.04.2020թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանը կազմել է եզրակացություն:

27.04.2020թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 23.06.2020թ. ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ **Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Դիմող Հասմիկ Շիրինյանը հանդիսանում է Պատասխանող Ռաֆայել Սեփիսանյանի վստահորդը (սույն փաստը հաստատված է համարվում կողմերի միջև կնքված թիվ 18.04.2019թ. թիվ 22/19 և 26.11.2019թ. թիվ 28/19 իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերով)։

- Պատասխանողը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում։

- Փաստաբանը չի ներկայացրել Դիմողի շահերը ո՛չ առաջին ատյանի և ո՛չ էլ վերաքննիչ դատարաններում։

- Դիմողի և փաստաբանի փաստացի պայմանավորվածությունների շրջանակը կազմել է նաև Բանկում Դիմողի շահերը ներկայացնելը։

- Փաստաբանը Դիմողի անունից գրություններ է ուղղել Բանկին։

- «ՀԲՄ» ֆինանսական արբիտրաժ հիմնարկի 06.09.2019թ. վճռով բավարարվել է Բանկի հայցն ընդդեմ Դիմողի և հօգուտ Բանկի բռնագանձվել է 16 508,59 ԱՄՆ դոլար և 410.373 ՀՀ դրամ։

- Դիմողը և փաստաբանը չեն ներկայացել արբիտրաժային դատարանի նիստին։

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի (արտոնագիր 1969, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ **2 անգամ** հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական գործը), որոնցից մեկով վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության։

Խորհրդի 04.02.2020թ. թիվ ԿԳ/48-Ա որոշմամբ Ռաֆայել Սեփիսանյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և տույժը մարված չէ։

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի

առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.7.2 կետի խախտման մասով - Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Վերլուծելով նշված կանոնը և համադրելով այն գործում առկա փաստերի հետ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ:

Նշված կանոնով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխիղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշված ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության համար: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպանի և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հեղինակությունը:

Փաստաբանը Պայմանագիր 1-ով ստանձնել է Դիմողի շահերն առաջին ատյանի դատարանում ներկայացնելու պարտավորություն, ինչը որևէ ձևով չի կատարել: Ինչ վերաբերում է Բանկին ուղղված գրություններին, ապա դա կարող է դիտարկվել, որպես պայմանագրով նախատեսված պարականությունների ապահովման նպատակով փաստաբանի գործադրած ջանքեր, սակայն քանի որ դրանք անարդյունք են եղել, իսկ փաստաբանն էլ հետագայում չի դիմել դատարան, ուստի Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանը չի կատարել իր ստանձնած պարտավորությունը:

Պայմանագիր 2-ով փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը վերաքննիչ դատարանում ներկայացնելու պարտավորություն, ինչը նույնպես չի կատարել:

Ավելին, վերը նշված կանոնի բովանդակությունից բխում էր, որ փաստաբանը պետք է ուսումնասիրեր Դիմողի և Բանկի միջև կնքված պայմանագիրը և առնվազն տեղյակ լիներ և Դիմողին պարզաբաներ վեճը արբիտրաժային դատարանին ընդդատյալ լինելու հանգամանքը:

Ստացվում է, որ Պայմանագիր 1-ը վերաբերում է առաջին ատյանի դատարանում Դիմողի շահերը ներկայացնելուն, այնինչ վեճը քննվել է արբիտրաժային դատարանում:

Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը խախտել է Կանոնագրքի 2.7.2 կետով սահմանված պահանջները:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.1.8 կետի խախտման մասով**

- Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է, որ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարումը չի կարողացել ապահովել զբաղվածության կամ որևէ այլ պատճառով, ինչի մասին իրեն հայտնի է եղել հանձնարարությունն ընդունելու պահին:

Վերը նշված կանոնը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ հանձնարարությունն ընդունելու պահին փաստաբանին հայտնի է եղել որևէ պատճառ, այդ թվում նաև զբաղվածությունը, որը խոչընդոտելու է հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարմանը և չնայած այդ հանագամանքին, փաստաբանն ընդունել է հանձնարարությունը:

Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն այս մասով փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 3.1.8 կետին հակասող:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.8.4 կետի խախտման մասով**

- Կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Գործի փաստերի համաձայն փաստաբանը Պայմանագիր 1-ով և Պայմանագիր 2-ով ստանձնած իր պարտավորությունները չի կատարել, սակայն վերադարձրել է միայն Պայմանագիր 2-ով իր ստացած հոնորարը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պայմանագիր 1-ի 5.1 կետի համաձայն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 1 տարի, որը լրացել է 18.04.2020 թվականին և հաշվի առնելով այն, որ սույն գործը քննելու օրվա դրությամբ Պատասխանողը չի ապացուցել իր կողմից գումարը

վերադարձնելու փաստը, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պայմանագիր 1-ի մասով փաստաբանը խախտել է նաև Կանոնագրքի 3.8.4 կետով սահմանված կանոնը՝ չվերադարձնելով հոնորարը:

Միջազգային փաստաթղթերում սահմանված կարգավորումների մասով

ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս... պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն:*

Նույն սկզբունքների 15-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները պետք է մշտապես լինեն լոյալ իրենց վստահորդների նկատմամբ և հարգեն իրենց վստահորդների շահերը:*

Թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերը մեջբերված միջազգային իրավական ակտերը հստակորեն սահմանում են փաստաբանի պարտականությունները վստահորդին մատուցել պատշաճ և ժամանակին փաստաբանական ծառայություն և կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին: Ըստ էության, թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերը փաստաբանի քննարկվող երկու պարտականությունը դիտարկում են մասնագիտական բարեխղճության և ջանասիրության բաղադրատարր: Ավելին՝ Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետով փաստաբանների մասնագիտական բարեխղճության չափանիշ է համարվում ներպետական օրենսդրությամբ փաստաբանի վրա դրված չափանիշներն ու էթիկայի նորմերը պահպանելը և կատարելը: Տվյալ պարագայում այդպիսիք սահմանված են Օրենքով և Կանոնագրքով:

Մասնագիտական բարեխղճության սկզբունքի խախտում է հանդիսանում փաստաբանի ցանկացած այնպիսի վարքագիծ, որը դրսևորվում է վստահորդին փաստաբանական ծառայության ուշացած մատուցմամբ կամ ընդհանրապես չմատուցմամբ, զբաղվածության կամ այլ պատճառներով վստահորդին որակյալ իրավաբանական օգնության տրամադրման անհնարինության գիտակցելով՝ վստահորդից հանձնարարության ընդունմամբ և վստահորդին վերջինիս գործի ընթացքի մասին չտեղեկացմամբ կամ պարբերաբար չտեղեկացմամբ, ինչպես նաև վստահորդի հարցերին հնարավորինս սպառիչ և ինֆորմատիվ չպատասխանելով:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողը պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել Դիմողին, մասնավորապես՝ փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանը չի կատարել պահանջվող գործողությունները բարեխիղճ և ժամանակին, իսկ Պայմանագիրը լուծելիս չի վերադարձրել հոնորարի այն մասը, որի դիմաց աշխատանք չի կատարել:

Խախտելով Կանոնագրքի 2.7.2, 3.8.4 ենթակետերի պահանջները՝ Պատասխանողը խախտել է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ

վերջինս փաստաբանի վրա դրել է Կանոնագրքի պահանջները պահպանելու և կատարելու պարտականություն, որը համարվում է խախտված, երբ հաստատվում է փաստաբանի կողմից Կանոնագրքի որևէ դրույթի խախտման փաստը:

Կարգապահական տույժի ընդհանրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանին (արտոնագիր թիվ 1969) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Ռաֆայել Սեփիսանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.8 կետի մասով կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

23 հունիսի 2020թ.
թիվ ԿԳ/61-Ա
ք. Երևան